№ 139 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4 **1890** ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4 № 139

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԱՌԱՋԻԿԱՅ 1891 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի.

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЕЖЕДНЕВНУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ

„КАВКАЗЪ.“

Въ 1891 году газета „Кавказъ“ будетъ выходить подъ прежнею редакціею и по прежней программѣ, ежедневно не исключая и понедѣльниковъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкою въ Тифлисѣ.	Съ перес. по Имперіи.	По почтовому союзу.
На годъ..... 11 р. 50 к.	На годъ..... 13 р. — к.	На годъ..... 18 р. 40 к.
„ 1/2 года... 6 „ — „	„ 1/2 года... 7 „ — „	„ 1/2 года... 10 „ — „
„ 3 мѣсяца . 3 „ 50 „	„ 3 мѣсяца . 4 „ — „	„ 3 мѣсяца . 6 „ — „
„ 1 мѣсяцъ . 1 „ 50 „	„ 1 мѣсяцъ . 1 „ 75 „	„ 1 мѣсяцъ . 2 „ — „

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи, Тифлисъ, Пушкинская. домъ А. Бабанасова.

Для иногородныхъ адресоваться: Тифлисъ, въ редакцію газеты „КАВКАЗЪ“.

Объявленія изъ Москвы, С.-Петербурга, Царства Польскаго. Остзейскаго края и изъ-за границы принимаются исключительно въ центральной конторѣ объявленій, бывшей Л. Метцль, въ Москвѣ, Мясницкая, домъ Спиридонова.

3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բագուի երիտասարդութիւնը. Երևանի անկարգութիւնների գործը. Նամակ Ներքին-Ախտայից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բարի մարդ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» № 125-ում «Տխուր երևոյթներ» իմ մի յօդուածում մատնացոյց անելով մեր կեանքում կատարվող մի քանի մութ կէտերի վրա, այժմ աւելորդ չեմ համարում առաջ բերել մի չարիք, որը սպառնում է բոլորովին ոչնչացնել Բագուի երիտասարդ դասը, եթէ օր առաջ դրա առաջը չառնվի:

Ինչպէս յայտնի է Բագուում այժմ խմբված են Կովկասի ամեն մի անկիւնից եկած երիտասարդներ, որոնց թիւը ոչ թէ հարիւրներով, այլ թէ հազարներով կարելի է հաշուել: Դրանք, ի հարկէ, ըստ մեծի մասին պատկանում են աղքատ և մասնաւորապէս միջին դասակարգին: Դրանցից գործաւոր դասը թողնելով մի կողմը, մի պատկառելի տոկոս կազմում են գործակատարները, որոնք ծառայում են այս ու այն պարոնի կամ խանութում, կամ գործարանում և կամ թէ նաւթահորերում. միւս մասն էլ ծառայում է այս ու այն առևտրական դրասենեակներում: Եւ ինչ է այս բոլորի նպատակը. չարչարվել, աշխատել և մի կերպ թէ իրանց և թէ իրանց ընտանիքի ապրուստը հայթայթել. գոնէ դրանք պանդխտութեան գաւազանը ձեռք առնելիս այս նպատակը ունէին աչքի առաջ: Բայց այժմ մարդս բոլորովին զարհուրում է, տեսնելով որ հայ երիտասարդութիւնը ոչ թէ իր դծած ուղիղ ճանապարհովն է ընթանում, այլ թէ մի բոլորովին ուրիշ, ծուռ ճանապարհով, որը նրան աննկատելի կերպով տանում է դէպի կորուստ: Եւ այս մենք ոչ թէ զանազան ցնորքներ ենք պատմում, այլ զուտ եղելութիւն, որը ամեն մի բօպէ կատարվում է մեր աչքի առաջ: Պարզենք մեր միտքը:

Բագուն Կովկասում իբրև առևտրական կենտրօն, ինչպէս որ ասեցի, դէպի իրան է գրաւել Կովկասի և, եթէ կարելի է այսպէս ասել, աշխարհի ամեն անկիւններից երիտասարդութեան մի ահագին դումար: Կար ժամանակ, որ այդ երիտասարդութիւնը փողի հետ վարվում էր ինչպէս հողի հետ, որովհետև առևտուրը ամենայաջող դրութեան մէջ էր գտնվում և ամեն մի մարդ էլ աշխատում էր իր գործակատարին ամեն կերպ բաւականութիւն տալ, որ ինչ է նա էլ աւելի եռանդով գործէ և իր տիրոջ գրպանները աւելի ևս հաստացնէ. և նրանք էլ չէին սխալվում, թէ իրանք էին շահվում և թէ գործակատարները: Ահա այդ անմոռանալի ժամանակներն էին, որ հայ երիտասարդութիւնը սկսեց իր կորստեան հիմքը դնել, այսինքն իր գերեզմանը փորել: Ահա թէ ինչպէս:

Բագուի այդ ժամանակվայ հռչակված ոսկին, ինչ ասել կուզէ, որ դէպի իրան էր գրաւել և զանազան արկածախնդիր կանանց խմբեր, որոնք անարգել կերպով իրանց բները հաստատել էին Բագուում և գրաւելով երիտասարդութիւնը դէպի իրանց՝ քամում, մրզում էին նրանց գրպանները: Այդ դեռ բաւական չէր. մի քանի արկածախնդիր մարդիկ էլ, օգտվելով հանգամանքներից, բացին զանազան զուարճութեան տներ, որտեղ երգում էին զանազան թափառական երգչուհիների խմբեր, որոնցից իւրաքանչիւր երգչուհին իր առանձին սենեակն ուներ, հետևապէս և կար երկրպագուների մի յայտնի քանակութիւն, որոնք իրանց օրվայ աշխատածը բերում և այդ կոկորդիլոսների բերանն էին խցկում, որ ինչ է նրանցից մի քնքոյշ խօսք, մի քաղցր ժպիտ ընդունեն և այլն: Եւ այս չարիքը գնալով, իր գագաթնակէտին հասաւ: Միայն այս տարի է, որ քաղաքային վարչութիւնը ուշադրութիւն դարձրեց և հրամայեց, որ այդ երգչուհիների խմբերը ցրվեն և այլ ևս իրաւունք չունենան հիւրանոցներում երգելու: Ճիշդ է, դրանցից մի մասը թողեց երգը և հեռացաւ, բայց միւս մասը էլի մնաց մի և նոյն հիւրանոցում, միայն ոչ թէ իբրև երգչուհի, այլ իբրև եկեր: Եւ էլի նա առաջվան պէս ընդունում է իր մօտ իր առաջվայ ծանօթներին և էլի մի և նոյն կերպ քամում-մրզում է նրանց գրպանները: Իսկ թէ անբարոյական տների թիւը ինչքան է, այդ մասին լաւ է լռել: Միայն այսքանը յայտնի է, որ անբարոյականութիւնը, զանազան վիներեկան ախտերը՝ ոչ մի տեղ այնպէս չեն առաջ գնում, ինչպէս որ Բագուում: Սիֆիլիսը—այդ սարսափելի հիւանդութիւնը, այսօր սասիկ կերպով տարածված է Բագուում: Չը կայ Բագուում այն ժիր ու առոյգ երիտասարդութիւն, որը մենք սովոր ենք տեսնել Կովկասի զանազան կողմերում, այլ կը տեսնէք դեղնած, հալած և հիւծված դէմքեր, որոնք ցերեկը մի կերպ քաշ են գալիս իրանց գործի ետևից, իսկ ամբողջ գիշերը անց են կացնում զանազան սիրուհիների մօտ:

Մի ուրիշ ախտ ևս այժմ արագ քայլերով ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐԻ ՄԱՐԴ

Ա.

Ամառը իրանց տերևախիտ ոստերով և ճմեռը՝ ձիւնով ծանրաբեռնված ծառերը մեծ շուք և զովեցկութիւն են տալիս Վանի Խաչփողան լայն փողոցին, որը սկսվում է քաղաքաղռնից և ամբողջ Այգեստանը կարելուց յետոյ, գնում յանգում է դէպի Ցայնկոյսների ձորակը:

Փողոցի երկու կողքերին գտնվում են քաղաքի ամենագեղեցիկ շէնքերը, որոնցից, մինչև Խաչփողանի հրապարակը, պատկանում են շատերը հայերին, այնուհետև մինչև Նէմէն աղայի աղբիւրը՝ ամենը պատկանում են խառն կերպով թէ տաճիկներին և թէ հայերին:

Նէմէն աղայի աղբիւրից ոչ-շատ վեր, այնտեղ, ուր վերջանում է վերջին հայի տան սահմանը, փռվում է դէպի աջ մի փողոց, որը տանում է դէպի ս. Յակովբ եկեղեցին. իր բերանի մօտ այդ փողոցը ունի մի բոլորովին նոր շինված երկյարկ շքեղ շէնք:

Այդ տունը սրանից մի քանի տարիներ առաջ պատկանում էր մի ինչ որ աղա՝ Թուրքի, սակայն տարեկան 25 ոսկիով վարձել նստել էր «Շէրիյէ շէրիֆի» ատենի նախագահ Զէֆէր բէյը:

Վերի յարկը նրա հարեմխանան էր. այդ խմացվում էր փողոցից անդամ, որովհետև այդ յարկի լուսամուտները ծածկված էին մանր տախտակեայ ցանցերով: Ցածի յարկը բէյի ընդունարանն էր, որի մօտ և ծառաների սենեակը. բայց որովհետև ծառաների սենեակը սասիկ ցուրտ էր լինում, դրա համար էլ քիւրդ Մէհմէդ-չավուշը թողել էր նրան և փաթաթված իր թաղեայ վերարկուի մէջ, գլորվել քնել էր ուղղակի ընդունարանի յատակի թանձր գորգերի վրա:

Հայաստանում թէ գիւղացին և թէ քաղաքացին ուշ չէ զարթնում քնից. աղօթարանը բացվելուն պէս ամեն ոք ոտքի վրա է, կերել է իր կերակուրը և դուրս է եկել իր գործին գնալու. տան մէջ այլ ևս քնած մարդ չէ գտնվում, եթէ միայն չը կան կամ մայրաքաղաքացիներ և կամ այնտեղից սովորութիւններ բերած անձեր:

Զէֆար-բէյը պօլսեցի էր. նրա կինն էլ էր պօլսեցի. երկուսն էլ քնած էին դեռ. արևը ծագել էր. քիւրդ Մահմադը երեսը լուացել, նամազը կատարել ու ընդունարանի վառարանի մօտ չոքած ծխում էր, երբ յանկարծ դուռը մեղմութեամբ բաղխեցին: Մահմադը չիբուխը գետին դրեց, աջ ձեռքը քսեց երեսին և փողոցի դուռը բաց արեց:

Դրան մօտ կանգնել էր մի կին. հայ կին էր, որովհետև վրայի ծածկոցը սպիտակ էր: Մի երկար կարմիր շապիկ և նրա վրա մի սպիտակ կարճ սաւան, որը հաղար կարկատան և հաղար ծակ ունէր իր վրա—ահա նրա հագուստը. իսկ թէ այդ երկար կարմիր շապիկի տակ ունէր նա հագուստ և կամ մերկ մարմինն էր—այդ դժուար է ասել:

Միջահասակ էր, դեռ երիտասարդ, բաւական սիրուն, սակայն նիհար և մի քանի տխուր խորշոմներով դէմք ունէր. աչքերը ուռած, կարմրած և կոպերը մեծացած. այտերը և քիթը ցրտից սևացած, իսկ ծնօտը անտեսանելի էր, որովհետև ծածկված էր սպիտակ «եաշմաղի» տակ: Նա դողում էր ցրտից և վեր ու վար էր անում ոտները. այդ ոտները պատսպարված էին մի զոյգ այնպիսի կօշիկներով, որոնցից հնակարկատների մօտ անդամ դժուար կարելի էր գտնել. ոչինչ չէր մնացել նրա վրա, բացի վզի մաշված կաշիից, տակի ծակ գոմէշի մորթից և երեսի ցանցի պէս ծակ-ծակ շորի կտորից:—Մի զոյգ եւրոպական կօշիկներ էին երեսը շորից. յայտնի չէ թէ որտեղից ձեռք էր բերել այդ կօշիկները, միայն վանեցիք մի քանի տարից ի վեր էր, որ Արմաղանին (այդ էր կնոջ անունը) այդ կօշիկներով էին տեսնում. ով գիտէ այժմ ո՞ր փողոցի անկիւնում ընկել մնացել են այդ անբաղդ կօշիկները:

Քիւրդ Մահմադը հէնց որ դուռը բաց արեց, Արմաղանը ներս սլացաւ նախագաւիթը, ոտները շարժելով դէն ձգեց կօշիկները, ցեխոտ և ծակ գուլպաները մի քանի անգամ քսմսեց դրան առջև փռված փսիաթի վրա ու սպրդեց դէպի ընդունարանը:

Մահմադը փողոցի դրան մօտ ապշած՝ նրան էր նայում. դուռը փակեց, գլուխը շարժեց և ինքն էլ մտաւ ընդունարանը:

—Որտե՞ղ ես ուզում, այ կնիկ, հարցրեց նա Արմաղանին, որը առանց այլ և այլութեան մօտ էր քաշել մի բազկաթոռ և վառարանի առջև նստած՝ ձեռները ու ոտները էր տաքացնում:

—Բէյին եմ ուզում, ասեց նա:

—Քնել է բէյը:

—Կը սպասեմ:

—Ուշ կը զարթնի:

—Կը սպասեմ:

—Զարթնելուց յետոյ նամազ կանի:

—Կը սպասեմ:

—Ցեղոյ սուրճ կը խմի:

—Կը սպասեմ, կը սպասեմ, կը սպասեմ... հասկանում էք, մարդիկ, Արմաղանը վեց տարի է, որ սպասելուց բացի ուրիշ ոչինչ գործ չունի. սպասում է նա փողոցից սկսած մինչև փաշայի տան պատերի տակ... ես սովորել եմ սպասել. այժմ էլ կը սպասեմ...

—Ի՞նչ գործ ունես բէյի հետ, հարցրեց Մահմադը:

—Չեմ ասի. հիմա ես վախենում եմ բոլորին պատմելու, որովհետև ծիծաղում են վրաս... բայց չէ, եթէ ուզում ես իմանալ, քեզ էլ կասեմ... ամենքն էլ գիտեն, հասկանում ես, ամենքն էլ... Անցեալ օր քիւրհանջի Ալին ծիծաղում էր ինձ վրա և իր հնոցի մօտ նստած իր ընկերներին պատմում էր իմ մասին... ամենքն էլ գիտեն և ծիծաղում են, դու էլ չես ծիծաղում...

—Խենթ է, մռմռաց քիւրդը ետ-ետ քաշվելով.

—Ցեսա՛ր... այժմ դու էլ ինձ խենթ կոչեցիր. ինչ, կարծում ես կը բարկանամ, ոչ, Պօղոսն էլ, դասաբ Օմարն էլ, քրդի լամուկներն *) իսկ և այժմ էլ դու... ես խենթ եմ, հա՛... ինձ խենթ էք կոչում, երբ հացս եմ ուզում ձեզնից, երբ...

—Այ կնիկ, ընդհատեց նրան քիւրդը—տաքացար, այժմ կլիր և գնա, բէյին տեսնել դժուար է այսօր:

*) Լակոտներ:

ռաջ է գնում. այդ Թղթախաղն է, որը շատերի համար կեանքի և մահու խնդիր է դարձել: Շատերը իրանց ունեցած-չունեցածը մսխելով զանազան սիրուհիների մօտ և ընկնելով անելանելի դրութեան մէջ, իրանց տալիս են Թղթախաղի, որ ինչ է, գուցէ բաղդի բերմամբ, մի կերպ բարեփոխեն իրանց ֆինանսական դրութիւնը: Բայց զուր յոյսեր: Այնուհետև սոխված դիմում են զանազան անարգար միջոցների: Ես գիտեմ գործակատարներ, որոնք գողութեան համար բանտ են նստել, և դա շնորհով սիրուհիների և Թղթախաղի:

Այժմ ինքն ըստ ինքեան հարց է առաջանում. «ով է մեղաւորը այս խնդրում»: Պատասխանը շատ պարզ է. «մեր հասարակութեան առաջնակարգ դասը», որը միայն իր գրպանի շահերն ունի աչքի առաջ. նրա մօքին անհասանելի է «հասարակութեան բարելաւութեան խնդիրը»: Նա չէ ուզում հասկանալ, որ ամբողջ սերունդ է փչանում և պէտք է աշխատել չարիքի առաջն առնել: Այդ նրա հոգը չէ. Թող բոլորը կորչեն, Թող բոլորը փչանան, միայն Թէ իրանցից կոպէկ չը դուրս գայ:

Ժամի 9-ից երեկոյեան գործակատարների ամբողջ դասը ազատ է լինում պարապմունքներից. ինչ պէտք է անէ նա. չէ՞ որ ամբողջ օրը աշխատել է և այժմ կամենում է մի ժամ ժամանակ անցկացնել. ուր գնայ: Ահա մի հարց, որի մասին մեր ազնիւները պէտք է մտածէին դեռ շատ վաղուց. եթէ նրանք այս հարցը գործնապէս վճռած լինէին, գուցէ այսօր մեր երիտասարդութեան դրութիւնը այսպիսի ցաւալի վիճակի մէջ չէր գտնվի: Հէնց այդ «ուր գնան» է, որ այսօր մեզ հասցրել է այս դրութեան: Եթէ ունենայինք գործակատարների ժողովարան, եթէ ունենայինք գրատուն, այն ժամանակ ես հաւատացած եմ, որ մեր երիտասարդութիւնը այսպիսի ողորմելի վիճակի չէր ենթարկվի: Գուցէ ինձ կասեն՝ «բաս ինչ է հայոց «Մարդասիրական ընկերութեան» գրատունը»:

Այդ ճիշդ է, մենք ունենք «հայոց Մարդասիրական ընկերութեան» գրատուն, որը կարելի է ասել բաւական նախանձելի դրութեան մէջ է գտնվում, և ես էլ հաւատացած եմ, որ նա չարիքի առաջը ըստ կարելոյն կարող է առնել, բայց ինչ արած, որ նա այժմ այդ նպատակին չէ կարող ծառայել, որովհետև նա փակվում է երեկոյեան ժամը 8-ին. իսկ ինչպէս վերևն ասեցի, մեր գործակատար դասը ազատ է լինում պարապմունքներից ժամը 9-ին:

Այս հանգամանքի վրա ենք հրաւիրում «Հայոց Մարդասիրական ընկերութեան» խորհրդի ուշադրութիւնը:

Ա. Տ. Գ.

ԵՐԵՒԱՆԻ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸ

Երևանի դատարանի վճռով գործը հետևեալ կերպարանք ունի, ինչպէս հաղորդում է «Тифл. Листокъ» լրագիրը:

1888 Թւի, յունվարի 5-ը երկար ժամանակ մնաց երևանցիների յիշողութեան մէջ: Բացառապէս հայերից բաղկացած քրիստոնեայ ազգաբնակութիւնն այդ օրը երեկոյեան տօնում է Ծնունդը և այդ պատճառով հայերի խանութները առաւօտվանից փակված էին: Հայերը զբաղված էին այդ տօնի զանազան պատրաստութիւններով. իսկ մահմեդականները բաց արին իրանց խանութները և բազարում 8 ժամից արդէն լաւ առուտուր էր սկսվել: Այդ ժամանակ քաղաքային կշեռքի մօտ կանգնած էին երկու հայեր՝ բամբակ գնող Թևոսեան և Ջարգարօվ: Առաջինը, բացի նրանից որ ունևոր մարդ էր, հայերի մէջ մի առանձին ժողովրդականութիւն էր վայելում, որպէս քաջ մարդ և որպէս ջերմ պաշտպան իր հաւատակիցների շահերին հայերի և Թուրքերի մէջ պատահած զանազան ընդհարումների ժամանակ: Առաւօտեան 8 և 9 ժամերի մէջ բազարում երևաց երևանցի ձիաւոր Թուրք Սուլթան-բէգ Նասիր-բէգ-օղլին. արագութեամբ մօտենալով այն տեղին, ուր կանգնած էին Թևոսօվ և Ջարգարօվ, հրացանի մի հարուածով նա սպանեց վերոյիշեալ երկու հայերին: Հրապարակապէս կատարելով այդ յանցանքը, բազմաթիւ ամբոխի աչքի առջն, Սուլթան-բէգը, հրացանը ուսը գցելով, փախաւ բազարից և գնաց քաղաքից դուրս: Այդ սպանութեան շարժառիթները մինչև այժմ ևս ճշդութեամբ չեն պարզված:

Մարդասպանի ետևից իսկոյն վազեցին մի քանի հոգի հայերից, որոնց Թւում գտնվում էր և այս գործում մեղադրվող Սարիբէգ Թաղիանոսօվ և պօլիցիական ստորին պաշտօնեաները: Այն ինչ, գազանային այդ երկու մարդասպանութեան լուրը կայծակի արագութեամբ տարածվեց քաղաքում և բարկութեան ու զայրոյթի բուռն ընդգացմունքը տիրեց քաղաքի ամբողջ հայ ազգաբնակութեանը, որոնք աճապին խմբերով սկսեցին հաւաքվել բազարի հրապարակի վրա. իսկ մահմետականները սկսեցին փակել իրանց խանութները: Հրապարակի վրա հաւաքված հայերի ամբոխը, Թէև սպանութեան առիթով յուզմունք և զայրոյթ էր արտայայտում, բայց, որպէս վկայում է ոստիկանապետ Ցիզանկօվ, ոչ մի բռնի միջոցներ չէր դիմում:

Առաւօտեան մօտ 10 ժամին, Թաղիանոսօվի հետ միասին Սուլթան-բէգի ետևից վազողները վերադարձան քաղաք և յայտնեցին, որ մարդասպանին չը կարողացան բռնել: Իմանալով այդ՝ ամբոխը կատաղեց և յարձակվեց հրապարակի վրա գտնվող մահմեդականների վրա և սկսեց ծեծել նրանց. շուտով սկսեցին հրացաններ արձակվել. սպանվեց մէկ Թուրք, ծանր վիրաւորվեց մի ուրիշը և սաստիկ գանակոծվեց մի երրորդը. զոհերի ընդհանուր Թիւը կէսօրին մօտ հասաւ արդէն 10—15-ի: Այդ ժամանակ հրապարակի վրա երևացին զօրքերը և հանգստութիւնը վերականգնվեց: Երևանի անկարգութիւններն առաջ բերող պատճառների փաստական կողմը որոշելով, դատարանի վճիռը անցնում է սպանութիւնների և վիրաւորումների նկարագրութեանը, որոնց պատճառով դատապարտված են Մէլիք-Դավիդօվ և ուրիշ մեղադրեալները:

Այն ժամանակ, երբ քաղաքային հրապարակի վրա համարեա ամբողջ ոստիկանութիւնը հետևում էր ամբոխին և միջոց էր ձեռք առնում խռովայոյզ ամբոխը հանգստացնելու, հայերի մի մասը, որոնց Թւում գտնվում էին և սպանվածների ազգականները, հրապարակի հեռու մասում սպանեցին վաճառական Բագիր-Հաջի-Աբաս օղլիին: Այդ սպանութիւնը մահմետական վկաները վերագրում են Սարիբէգ Թաղիանոսօվին, որը, Միրզա-Ալէքպէրի և ուրիշների խօսքերով, ատրճանակի մի հարուածով մահացու վէրք հասցրեց Բագիրին: Թողնելով այդ վիրաւորեալին, ամբոխը գնաց փողոցի վերևի կողմը և հանդիպեց պարսկահպատակ Մաշադի-Հուսէյնին, որին մեղադրված Աբգարեան մէջքում փոքրիկ խանչալով վէրք հասցրեց. վիրաւորվածը փորձեց փախչել, բայց հասաւ նրան Աղաջան Թաղիանոսօվ և երկրորդ վէրքը հասցրեց. երկու վէրքերն էլ բժիշկները ծանր են գտել. այդ տեղից 13 սաժէն հեռաւորութեան վրա, դէպի ամբոխը գնում էր Քէրբալայ-Ասլանը փողից հաց գնելու. նրա մէջքին վէրք հասցրեց, որպէս վկայում են փռնում եղող մարդիկ, մի հայ, որի մականունն է «մէկ ու կէս մարդ», այն է Երևանի պօլիցիայի դեսեատսկի Տէր-Օհանէսօվ. վերջապէս վիրաւորված էր Սալախ, բայց նրա վիրաւորումը վերագրում են մեռած Լադեանցին, որի վերաբերութեամբ գործը դադարեցրած է:

Այդ գործի առիթով հարց ու փորձի ենթարկված վկաները, վերոյիշեալ յանցանքների ականատես Թուրքերը, որոնք հրապարակի զանազան կէտերումն էին եղել, նկարագրելով մէկ սպանութեան և երեք վիրաւորումների փաստական կողմը, հաստատում են, որ հայերի այդ խմբին առաջնորդում էր պօլիցիական պրիստավի օգնական Լեւոն Մէլիք-Դավիդօվ, որը բոլոր չորս վիրաւորումների ժամանակ ևս դրդում էր ամբոխին կատարել այդ յանցանքները՝ բղաւելով «տուէք դրանց»:

Երևանի նահանգական դատարանը, քննելով այդ գործը, կատարեալ հաւատ ընծայեց դատարանում հարցափորձի ենթարկված վկայ-մահմետականներին, մերժելով իրանց արդարացնելու համար մեղադրվածների ներկայացրած բոլոր փաստերը, և այդ պատճառով պատժի դատապարտեց բոլոր մեղադրվածներին:

Դատաստանական պալատը, ասում է լրագիրը, անհրաժեշտ գտաւ նորից քննութիւն կատարելով որոշել. Թէ արդեօք կարող էին վկաները տեսնել վիրաւորումներն այնպէս, որպէս նկարագրում են նրանք և այդ պատճառով յետաձգեց վճռի կայացնելը մինչև նոր քննութիւն կատարելը:

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՅԻՑ

Նոյեմբերի 23-ին

Բուգուռոյցք հիւանդութիւնը Թէև մի կարճ ժամանակ մեղմացել էր, բայց այժմ դարձեալ սկսեց երևան գալ: Մի շաբաթվայ ընթացքում այդ ցաւին զոհ գնացին երեք երեխաներ այստեղի մալականների մասից: Արդէն երկու տարի է, որ դիֆթերիտը Թագաւորում է մալական հասարակութեան դեռահաս մանուկների շրջանում և անյագ գայլի նման բազմաթիւ զոհեր է տանում:

Բացի մալականների երեխաներից, այդ հիւանդութեան զոհ են գնացել նաև մի քանի երեխաներ այն պաշտօնատար անձինքների, որոնք այս ամառ եկել էին այստեղ ամարանոց և բնակվում էին մալականների մասում:

Մալական հասարակութիւնը ոչ մի միջոց ձեռք չէ առնում այդ տարափոխիկ հիւանդութեան առաջն առնելու համար, այլ միայն աշխատում է աղօթքներով և հասարակական այլ և այլ մատաղներով Աստուծու սիրտը քաղցրացնել, որպէս զի խղճայ իրան և հեռացնի իր երեխաների միջից այդ կործանիչ հիւանդութիւնը:

Այդ նպատակով ահա երրորդ անգամն է, որ այս տարի մալական հասարակութիւնը մատաղ է անում: Իսկապէս ասած, դրան չէ կարելի մատաղ անուն տալ, դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հասարակական ճաշկերոյթ կամ, ինչպէս իրանք են անւանում, «օբշչեստվեննիյ օբեդ»: Դրանց այդ հասարակական ճաշկերոյթը տեղի է ունենում այսպէս.—առնում են մի քանի պուդ միս կամ մորթում են մի եզ կամ կով, գնում են մի 5—10 փութ շաքար և դրա համեմատ Թէյ, և հաւաքվելով մի աւելի ունևոր մարդու ընդարձակ տան մէջ, սկսում են սարքել այդ հասարակական սեղանը: Տղամարդկանց սեղանակից են լինում և մալականների կանայք, որոնք չարքաշ նստած իրանց ամուսինների հետ միասին այդ հասարակական հանդէսում, մի կողմից բոլորը միաձայն երգում են աղօթքները, իսկ միւս կողմից վայելում են «համադամ» խորտիկներ՝ իրանց հասարակական սեղանից:

Մալականների այդ մատաղից, որին մենք «հասարակական ճաշկերոյթ» անուանեցինք, ոչ մի կողմնակի մարդու համար բաժին չէ հանվում. ոչ

—Այդ ես հասկանում եմ, ժպտաց դառնութեամբ կինը—գիտեմ ինչ ես ուզում ասել. սովորել եմ հասկանալ. փող ես ուզում, հա... էլ չը մնաց, ինչ որ ունէի տուի, մայրացի տուի.... մյ, եթէ կուզես այս գուլպան, էն էլ քեզ տամ:

Քիւրդը զարմացած Արմաղանին նայեց:

—Ի՞նչ կայ, ծիծաղեց Արմաղանը—Սաւրք էֆէնդիի ծառային ճանաչում ես, ամեն անգամ որ ինձ ներս էր Թողնում կամ գլխիս չորը, կամ չապիկս էր պահանջում... չը լինի դու էլ այդպէս ես... հա, հա, հա, ծառաների համար իմ կաշառքս դրանից այն կողմը չէ անցնում, չես ուզում, Եա ես քաշվում.... կաշառք չես ուզում... դու իմ ճանաչածս ծառաների մէջ մի հատիկն ես, ուրեմն առանց կաշառքի Թոյլ ես տալիս որ բէյի հետ խօսեմ:

—Նստիր որքան կուզես:

—Ես բէյին էլ իմաց կը տամ:

—Կասեմ:

—Շնորհակալ եմ.... բայց բաւական յիմարն ես եղել:

—Ե՞ս յիմար:

—Դու... այդ պաշտօնի մէջ միթէ յիմարութիւն չէ կաշառք չը սիրելը... ես կը սպասեմ բէյին:

Ասեց Արմաղանը, գլուխը կրծքի վրա կախեց, ուռած և ճաքճքած ձեռքերով ծածկեց դէմքը և այլ ևս անշարժ մնաց:

Բ.

—Հ՛ը, Էլի եկար... ա՛ կնիկ, ես քեզ քանի անգամ ասեցի, որ դա իմ գործը չէ, ես չեմ կարող խառնվել այդպէս բաների մէջ:

—Թոյլ տուր մեռնեմ, Սահակ աղա, ձեռքդ պագնեմ...

Այդպէս էր աղաչում Արմաղանը Արարոց վարժապետ Սահակ էֆէնդիին, որը դէմքը մռայլած, չէր էլ մտածում բարձրացնելու իր ոտքերի առջև փռված խեղճ կնոջը:

—Չէ, շարունակեց Սահակը յուզմամբ—ես ինչ անեմ ու գլուխս սաղ-սաղ՝ աւետարանի տակը դնեմ. ինչպէս ասում ես, փաշան ու քօմիսէրները... *) ոչինչ չը կարողացան անել իրանց կնքած Թղթերով:

—Թէ կնկանդ արևը կը սիրես, լալիս էր Արմաղանը առանց արտասուքի—մեռայ ես անտէր, անտուն ու փողոցները Թափառելով. վրաս հալ չէ մնացել, ոտքերս ու ձեռքերս փայտ դարձան ցրտից, աղջիկս անօԹութիւնից սրա-նրա դուռը ընկել հաց է հաւաքում... մի անգամ լաւութիւն արել ես, մէկ էլ արա, Թէ քո պստիկիդ արևը կը սիրես...

Սահակ էֆէնդին, որը մի երկարահասակ երիտասարդ էր, ընչաքի ծայրը ոլորելով, ճակատը կնճռած սկսեց ճեմել սենեակի մի անկիւնից դէպի միւսը:

Այդ խօսակցութիւնը կատարվում էր վարժապետի տան ընդունարանում, որը կահաւորված էր տաճկական ձևով.—մի սադիր *) սենեակի լերին կողմում՝ լուսամուտի մօտ. պատերը տակը կարպետներ փռած, լուսամուտները կարմիր կտավով վարագուրած, սենեակի մէջ սեղում Թիթեղեայ վառարան, նրա մօտ երկաթեայ ծանր կրակարանը, փոքր ինչ հեռու մի հին սեղան և մի քանի աԹոռներ դրած այս—այն կողմը:

—Լսիր, Արմաղան, ասեց վարժապետը կանգ առնելով դրան մօտ չոքած կնոջ առջև—աշխարքը գիտէ, որ այն տունը քոնն է և Պետրոսից էլ կարող ես ետ առնել. բայց ախր դու իզուր ես նրա օձիքից բռնել, նա այդ գործի մէջ շատ մեղաւոր չէ:

—Ախ չէ, գոչեց Արմաղանը բոցափայլ աչքերով—այդպէս չէ, ոտացդ հողն եմ, չէ Պետրոսին դու լաւ չես ճանաչում: Իմ տունս 20 ոսկի՞ արժէ, որ նա քսան ոսկիով է առել և այժմ էլ չէ ամաչում վկայութիւն է տալիս Թէ տունը քարուքանդ էր ու քսան ոսկի էլ չարժէր, Թէ Մուխսի մանուկը ինձ մի կոպէկ էլ պարտ չէր... ինչ որ անում է էդ Պետրոսն է անում: Սաղ Թաղում լուր է տարածել Թէ Արմաղանը գժվել է ու Թիւրքերին է ծախում իրան...

—Իսկ Մուխսի մանուկը, հարցրեց Սահակը:

—Է՛ն, էն անաստուածը, ես նրա պատանքը կարեմ, ես նրան սև հողի մէջ դնեմ... երեկ իրիկուն լուր էր ուղարկել Թէ «Արմաղան, աղջիկդ առ ու արի ինձ մօտ, խեղճ ես, բան պիտի յայտնեմ քեզ»: Ելայ, գնացի, ինձ տարաւ վերի օդէն ու ասեց. «Արմաղան, ինչ կը տաս, որ էնպէս անեմ, որ տունդ կէսը քեզ ընկնի».—ինչ պիտի տամ, էլ ինչ ունեմ, որ ինչ տամ:—Է՛հ, ասեց նա ծիծաղելով—դու արդէն ծերացել ես, բայց ա՛յ, աղջիկդ... Քի՛չ մնաց ուշքից գնայի, էլ բան չը Թողի ասեցի ծառաներին կանչեց ու հրամայեց, որ ինձ-էլլ զրպարտողի՝ դուրս գցեն տնից... Ես էլ աղջկաս ձեռքից բռնեցի ու դուրս եկայ փողոց. դրան մօտ կանգնեցի, բերանս բացի ու ասի ինչ որ պէտքն էր: Ինձ խենԹ կոչեցին, անցորդները զռում էին՝ «խենԹ կնիկ, կորիր էդ մարդու տան առջևից, ինչու ես այդպէս անպատիւ խօսքեր ասում այդ պատուաւոր աղային»... Խորհեմ ես նրա «պատուաւոր» գլուխը. երբ անցորդներին պատմեցի Մուխսի Մանուկի արածը, քիչ մնաց ինձ կարտէին, Թէ ես ինչպէս եմ համարձակվում մի այդպէս «Աստծու մարդու» վրա զրպարտութիւններ անել...

—Թի՛ւ, Թքեց Սահակը միջամտելով նրան—և դեռ ես մենք, յիմարներս, սխալված գլուխ ենք ծռում այդպիսի յիմարների առջև....

—Հա, քեզ զուրբան, գոչեց Արմաղանը—դէհ այժմ ես ինչ անեմ, դու ասա, ոտներիդ տակը մեռնեմ, էլ ինչ անեմ, սկսած ծառայից մինչև փաշայի տուն փողերս, աղաչեցի, ոտքերն ընկայ: Էսօր էլ Ջաֆար-բէյին գնացի. կնիկը իմացել էր, հասկացել էր, Թէ իր մարդն ինձ վարձով է լսում ինձ, քիչ մնաց սպանել տար ինձ, հալիւ փախայ.... մի խելք սովորցրու ինձ, խելքիդ զուրբան, Սահակ աղա, մի անգամ լաւութիւն արել ես, մէկ էլ արա, Աստուած քեզ նայում է վերևից, նա հասկանում է ինձ, նա կը փոխարինէ քեզ....

(Կը շարունակվի)

*) Շատ տարիներ առաջ Վան երբ քննիչներ եկել են մի քանի փաշաներ, ի Թիւս որոց և մի հայ Աղաբէգեանը: Այդ փաշաներին, կոչում են քօմիսէր փաշաներ:

*) Օթոց.

մի աղքատ ընտանիք, ոչ մի օտարական կամ մի որ և է անցորդ՝ փայ—բաժին չէ ունենում մալականների այդպիսի ճաշերից այնպէս, ինչպէս այդ տեղի է ունենում հայ հասարակութեան, հայ ամբոխի շրջաններում, մատաղ լինելու միջոցին։

Մալականների վերջին ճաշկերոյթը հետևեալ փաանդի համար էր. բացի դիֆթերիտից, մալականների աչքի առաջ ունեն և այն ժանտախտը, որը, ինչպէս իրանք են պատմում, երևալով իրանց ազգակիցների զանազան գիւղերի տաւարների մէջ, սպառնում է անցնել դէպի իրանց անասունները և այդ պատճառով իրանց անասուններին այդ ցաւից հեռու կացուցանելու համար, նրանք կանխապէս դիմում են նախախնամութեան օգնութեանը, որպէս զի խնայէ իրան «հաւատացեալներին» և չուղարկէ ժանտախտը դէպի նրանց տաւարները։

Ռ. Տ. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 29 Նոյեմբերի

Թոյլ տուէք ձեր պատուական լրագրի միջոցով յայտնել Թիֆլիսի պատուելի հասարակութեանը հետևեալը։

Ահա մի ամիս է Թիֆլիսում գտնվելով, շատ տիկիններ և պարոններ դիմում են ինձ, յայտնելով իրանց ցանկութիւնը հայոց թատրոն ունենալու, այս ու այն առաջարկութիւններ են անում, որպէս զի ես կազմակերպեմ որ և իցէ խումբ և տամ մի քանի հայոց ներկայացումներ։ Ես ի սրտէ պատրաստ եմ իմ բոլոր բարեկամների ցանկութիւնը և իմ սրտի փափագները կատարելու և այդ պատճառով մի քանի պատուաւոր պարոնների հետ թատրոնի մասին երկար խօսելուց յետոյ, ահա ինչ եզրակացութեան հասայ։ Թիֆլիսի հայոց հասարակութիւնը պատրաստ է խումբ պահելու, բայց քիչ թէ շատ լաւ խումբ, այսինքն որ այդ խումբը, եթէ նման չը լինի 80-ական թւականների խմբերին, գոնէ նրանցից քիչով վատ լինի։ Ես ինքս անձամբ համաձայն եմ այս տեսակէտին, որովհետև թատրոնի նպատակն է տարածել գեղեցիկը և ներշնչել ճաշակ ժողովրդի մէջ. այդ պատճառով հարկաւոր է որ գեղեցկութեան զգացմունք և գեղեցկի գաղափար տարածողները լինեն զարգացած մարդիկ։ Դերասաններ մեր բեմի համար միշտ կարելի է գտնել,—իսկ դերասանուհիք մինչև այժմ գոնէ չեն երևում։ Թատրոն գոյութիւն չունենալով, դերասանուհիք և դերասաններ չէին կարող լինել առաջ, բայց այժմ ժողովրդի մէջ թատրոնի պահանջը այնքան զարգացել է, որ կարելի է յուսալ, թէ նոյն ժողովրդից կը յայտնվեն դերասանուհիք և դերասաններ։ Բայց ինձ կարող են պատասխանել, որ թատրոն կար, ուրեմն թող երևային դերասանուհիք. դրան պատասխանելը շատ հեշտ է, սակայն թողնենք այդ։ Ես այժմս իմ ներկայ նամակովս դիմում եմ հայ հասարակութեանը ամբողջ Կովկասում, և մանաւանդ հայ օրիորդներին և հայ տիկիններին, և առաջարկում եմ. ով որ մի որ և է ձգտում է զգում իր մէջ դէպի բեմը, ում համար թանգ է հայոց թատրոնի ապագան,—թող փորձի իր ոյժերը բեմի վրա, թող հեռացնի իրանից նախապաշարմունքը, թող թատրոնի գործի վրա նայէ իբրև սրբազան հաստատութեան, որտեղից տարածվում են նոյն ճշմարտութեան սկզբունքները, ինչպէս դպրոցից։

Շատ անգամ լսում եմ որ մեր բեմի վերականգնումը կախված է Կ. Պօլսի դերասանուհիներից. չը համաձայնելով այդ մտքին, համարձակ կարող եմ ասել, որ մենք, կովկասեցիներս, պակաս չենք ոչ մի բանով պօլսեցիներից,—ուրեմն ինչու պակաս պիտի լինենք թատրոնի վերաբերեալ գործում։ Ես հաւատացած եմ որ մեր հասարակութեան մէջ կան լաւ ոյժեր, բայց նրանք չեն երևում, որովհետև նախապաշարված են զանազան համոզմունքներով. թող նրանք առաջ գան, թող ազատվեն այն նախապաշարմունքից, որ բեմ դուրս գալը անվայել բան է.... Ամեն մարդու բարոյական կամ անբարոյական լինելը՝ իրանից է կախված, ամեն հասարակութիւն ունի բարոյական և անբարոյական անդամներ, թող այդ չնչին բաները չը վախեցնեն մեր յարգելի օրիորդներին և տիկիններին։ Տաս տարի սրանից առաջ հայ օրիորդը ամօթ էր համարում դպրոցում վարժուհի լինելը.... Փառք Աստուծու, այժմս որքան մեծ է մեր վարժուհիների թիւը։ Նոյնպէս և դերասանուհիք կունենանք ապագայում. բայց խղճուր հայոց թատրոնի գործն է յետաձգվում. Թող դուրս գան նոր ոյժեր, և նրանց, ուրիշների շարքում, կը պատկանեն ապագայ հայոց թատրոնական պատմութեան մէջ պատուաւոր տեղեր։

Թող մեր հայ օրիորդները վեր առնեն օրինակ այն պատուելի և ազնիւ վրացի օրիորդից, որն այս տարի աւարտելով իգական գիմնազիայում, նուիրել է իրան վրաց թատրոնին։ Ես զգում եմ թէ որքան մեծ պիտի լինի այդ սէրը դէպի թատրոնը, որ թողնելով ամեն բան, նա նուիրել է իրան՝ իր սիրած գործին։

Ցանկացողները կարող են դիմել ինձ «Մշակի» խմբագրութեան միջնորդութեամբ՝ յայտնելով ինչ դերում և ինչ պիէսաների մէջ ուզում են մասնակցել։ Յուսամ, որ այս նամակս չի լինի՝ «Ձայն բարբառոյ յանապատի»։

Գ. Տէր-Պետրոսեան (Օրդուբաթեան)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, դեկտեմբերի 2-ին, կայացան ԹԻՖԼԻՍԻ բանկային թատրոնի դահլիճում՝ մեր քաղաքի դումայի երրորդ կարգի ձայնաւորների ընտրութիւնները։ Բայց այս անգամ ընտրվեցան միայն 10 հոգի ձայնաւորներ, իսկ մնացած 14 ձայնաւորների ընտրութիւնները պէտք է կայանան հետևեալ կիրակի օրը։ Սակայն, ինչպէս կարծում են, դեկտեմբերի 2-ին կայացած ընտրութիւնները կարող են շատ պատճառներով անվաւեր համարվել, մանաւանդ հետևեալ պատճառով, որ քաղաքային կանոնադրութեան զօրութեամբ ուղղակի կասացեալի առիթ է համարվում. բոլոր ընտրողների թիւը 578 էր, և քուէների այդ նոյն քանակութիւնը յայտնվեց առաջին արկղի սև և սպիտակ քուէները միասին հաշւելու ժամանակ, այնուհետև հետևեալ ութ արկղերում հաշւեցին միայն «սպիտակ» քուէները, իսկ երբ ընտրողներից ոմանք պահանջեցին, որ վերջին, 10-որդ արկղի երկու կողմի քուէներն էլ հաշւեն,—յայտնվեց, որ այդ արկղի սև և սպիտակ քուէները միասին հաշւած՝ ոչ թէ 578 էին, այսինքն համեմատ ներկայ գտնված ընտրողների թւին, այլ արկղում կար 614 սև ու սպիտակ քուէ։ Մենք յիշում ենք, որ նախկին քաղաքագլուխներից մինի (որքան յիշում ենք Կիպիանիի) նախագահութեան ժամանակ կայացած ընտրողական ժողովում, երբ յայտնվեց, որ ընտրողական արկղերից մինում մի 10 հատ աւելորդ քուէ կար,—նախագահը փակեց ժողովը, յայտնելով ընտրութիւնը անվաւեր և նշանակեց ժողովը միւս կիրակի օրվայ համար։ Իսկ այս անգամ արկղերի մէջ գտնված քուէների զանազանութիւնը ոչ թէ 10 հատ էր, այլ 36 հատ։

—

Լրագիրները հաղորդում են, որ բարձրագոյն կառավարութեան հրամանով Կովկասեան գրաքննական մասնաժողովի արևելեան լեզուների աւագ-ցէնզոր՝ Սօլօմօն Մէլիք-Մեհրաբեան հրաժարեցրած է իր պաշտօնից։

—

Լրագիրները հաղորդում են, որ ՔՈՒԹԱՅԻՍԻ նահանգապետ գեներալ Գրոսման, երկարատև հիւանդութիւնից յետոյ, դեկտեմբերի 1-ին վախճանվեց։

—

Նոյեմբերի 30-ին մի ոմն Տէր-Յովհաննէսով, որը վաղուց արդէն կառավարութիւնից թոյլտուութիւն էր խնդրում բանալ ԹԻՖԼԻՍՈՒՄ վառօդի մի պահեստ, ներկայանում է նահանգական վարչութեան ատեանը և դիմում է այդ վարչութեան մէջ ծառայող պաշտօնեայ Միխայլօվին իր գործի մասին տեղեկութիւն ստանալու համար։ Երբ պաշտօնեան յայտնում է խնդրատուին, որ նահանգապետի հրամանով նրան չէ թոյլատրվում խնդրքի մէջ մատնացոյց արած տեղում, որը քաղաքի կենտրոնում է գտնվում, բանալ վառօդի պահեստ, այն ժամանակ Տէր-Յովհաննէսով հանում է մի ռեվօլվէր և ուղղելով նրան Միխայլօվի դէմ, ռեվօլվէրից արձակված մի քանի հարուածներով ծանր կերպով վիրաւորում է Միխայլօվին։ Սպանութեան փորձ անողին անմիջապէս կալանաւորում են, իսկ վիրաւորվածին տանում են տուն, բժշկական օգնութիւն հասցնելու համար։ Միխայլօվի ստացած վէրքերը շատ ծանր են, այնպէս որ նրա կեանքը վտանգի մէջ է։

—

Կիրակի, դեկտեմբերի 2-ին, ժամը 12-ին, ԹԻՖԼԻՍԻ Ս. Գէորգ վրաց եկեղեցում հաւաքվեց երկու սեռի թէ վրացիներից և թէ հայերից բաղկացած աղօթողների մի ահագին բազմութիւն, Քութայիսում նորերումս վախճանված տիկին Հեղինէ Լօրդկիպանիձէի (Կիպիանիի) յիշատակին կատարված հոգեհանգստին ներկայ գտնվելու համար։

—

Ստացանք Վիէննայի Մխիթարեան միաբանութեան «Հանդէս Ամսօրեայ» հրատարակութեան հետ 48 երեսից բաղկացած մի փոքրիկ բրօշիւր, հետևեալ վերնագրով. «Դէպի Հիւսիսային գլուխ», թարգմանեց հայր Մեսրոպ վ. Ծաղիկեան (Վիէննա, Մխիթարեան տպարան, 1891 թ.)։

—

Ստացանք Բագուի Ս. Բ. Տէր-Յովհաննիսեանցի տպարանում ներկայ 1890 թւին տպված, և Ն. Աբրահամեանցի հրատարակած՝ «Արբեցող և տաքսէր» վերնագրով Արշակ Թումանեանի վէպը։ Գրքոյկը, որը բաղկացած է 72 երեսից, շատ մաքուր է տպված։

—

«Մշակի» անցեալ համարում, յօգուտ «Հայուհեաց բարեգործական ընկերութեան» Նոյեմբերի 23-ին տուած ներկայացման մասին գրած մեր լուրի մէջ՝ մտաւ հետևեալ տպագրական սխալը. ներկայացումից գոյացաւ ընդամենը 622 րուբլի 20 կոպ., այն ինչ «Մշակի» մէջ սխալմամբ տպված է եղել 822 րուբլի 20 կոպէկ։

—

Մեզ գրում են ԿԱՐՍԻՑ որ Նոյեմբերի 25-ին յօգուտ այդ քաղաքի հայոց դպրոցների տուած թատրոնական ներկայացումից և բուֆէտից՝ գոյացաւ ընդամենը 307 րուբլի, որից դուրս գալով ծախսը, զուտ արդիւնք մնաց 227 րուբլի։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղը, Նոյեմբերի 25-ին, կիրակի օր, ընդհանուր ժողով կազմեց, որտեղ կարդացվեց 1890 թւի ելևմուտքի հաշիւը և ընտրվեցան 1891 թւի համար վարչութեան չորս անդամներ։ Յուսալի է որ եկող տարում ընկերութեան ճիւղի անդամների թիւը կը շատանայ և մեր ժողովրդից շատերը սիրով կը մասնակցեն ընկերութեան մէջ»։

—

Նոյեմբերի 30-ին, ուրբաթ օր, կայացաւ ԹԻՖԼԻՍԻ ժողովարանում երգչուհի տիկին դը-Բուրբինի կօնցերտը։ Երգչուհին յօգնած էր երևում։ Հասարակութիւնն էլ շատ չը կար դահլիճում։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 25-ին տեղիս թատրոնասէրների խումբը հայերէն ներկայացում տուեց։ Խաղացին «Կողոպտված պօստը» դրաման։ Ներկայացումը, պէտք է ասել, այնքան էլ աջող չէր. խաղացողներից շատերը իրանց դերերը չը գիտէին։ Բոլոր տոմսակները վաճառված էին։ Մեզ մօտ հիւր է դերասանուհի տիկին Փառանձեմ, որը կամենում է Կարսում մի քանի ներկայացումներ տալ»։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են իբր թէ Թիֆլիսի և Քութայիսի ազնուականները ուղարկում են Պետերբուրգ մի պատգամաւորութիւն, բարձրագոյն կառավարութիւնից խնդրելու՝ Թիֆլիսում մի համալսարան հիմնելու համար։

—

Ներկայումս, ինչպէս երևում է Պետերբուրգում հրատարակած տեղեկութիւններից, Ռուսաստանում լոյս են տեսնում զանազան լեզուներով 703 պարբերական հրատարակութիւններ։

—

Վիէննայի «Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը եկող տարվանից հրատարակվելու է աւելի մեծացրած դիրքով։ Խմբագրութիւնը խոստանում է առատ նիւթ տալ ընթերցողներին։ Իսկ մենք մեր կողմից աջողութիւն ցանկալով «Հանդէս Ամսօրեային», կը ցանկայինք, որ այդ ա ռ ա տ ն ի ւ թ ի ընտրութիւնը խ ի ս տ լինի, որով և կարելի կը լինի մեծացրած ամսագրին աւելի հետաքրքրական և պիտանի դարձնել։

—

«Кавказъ» լրագիրը, դեկտեմբերի 3-ի համարում հաղորդում է, որ նահանգական վարչութեան վիրաւորված պաշտօնեայ Միխայլօվի առողջութիւնը բաւարար դրութեան մէջ է։

—

Դեկտեմբերի 2-ի ընտրողական ժողովում 145 քուէարկվողներից ընտրվեցան Թիֆլիսի Դումայի երրորդ կարգի ձայնաւորներ առ այժմ միայն 10 հոգի, որոնք են. 1) իշխ. Մ. Մաչաբելի, 2) Կ. Կօլուբանսկի, 3) իշխ. Զ. Ջօրջաձէ, 4) իշխ. Վ. Մաչաբելի, 5) Գ. Սունդուկեանց, 6) Ն. Կայթմազով, 7) Ա. Շահազիզեան-Կամսարական, 8) իշխ. Ն. Անդրօնիկօվ, 9) Վ. Կանդուրալեան և 10) Գ. Քարթվելով։ Հետևեալ կիրակի պիտի ընտրվեն դարձեալ 14 հոգի ձայնաւորներ։

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Յայտնի է, որ Թիֆլիսի ոստիկանապետի և բժիշկների հրամանով, քաղաքիս բոլոր մասերի ոստիկանները պարտաւոր են ամեն օր հսկել խանութպանների վրա։ Ուշադրութիւն ենք դարձնում հետևեալ անկարգութեան վրա. անցնելով ձկնավաճառների խանութների առջև, մենք տեսանք ինչպէս ձկնավաճառներից մինը դուրս բերելով տաւարի արիւնով լի ամանը՝ ածեց այդ արիւնը «իշխան» ասված կամ «գեղարքունի» ձկների վրա, որպէս զի հին ձուկը նոր երևայ»։

—

Գ. Յովհաննէս Թումեանց նուիրել է «Մշակի» առաջիկայ 1891 թ. տարեկան մի օրինակը Ներքին-Ագուլիսի հայոց օրիորդաց դպրոցին։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 Նոյեմբերի։ «С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է համառուսական ուղղափառ միաբանութիւն հիմնելու մասին, որի նպատակը պիտի լինի՝ պահպանել հոգևորականութեան դրութիւնը, բարձրացնել ժողովրդի բարոյականութիւնը, դիմադրել աղանդների առաջ գալուն և ռացիօնալական վարդապետութեան։—Ենթադրութիւն կայ հիմնելու ֆարմացեւտների դպրոց՝ կին-ֆարմացեւտներ պատրաստելու համար։—«Новости» լրագիրը հաղորդում է, որ ցանքերի և անասունների փոխադարձ ապահովագրութեան փոխարէն՝ պետական խորհուրդը նպատակայարմար է գտել պետական պարտաւորացուցիչ ապահովագրութիւն և այժմ քննում է այդ հարցը։

ԲԷԼԳՐԱԴ, 1 դեկտեմբերի։ Գաղտնի նիստից յետոյ սկուպշչինան հետևեալ վճիռը կայացրեց. «Ի նկատի ունենալով, որ օրէնսդրութեան և սահմանադրութեան մէջ չը կայ այնպիսի որոշում, որի զօրութեամբ սովորական սկուպշչինան կարող լինէր քննել և վճռել Թագուհու կողմից յարուցած հարցը, սկուպշչինան, առանց մտնելու գործի քննութեան մէջ, անցնում է հերթական հարցերին։ Սակայն, դրդված լինելով ներկայ գործից, սկուպշչինան ցանկութիւն է յայտնում, որ կառավարութիւնը, խնամակալութեան հետ միասին հոգային յետ մղել թագաւորական ծնողների գժտութիւնների վնասակար հետևանքները, որոնք հարուած են տալիս երկրին և գահի արժանաւորութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 դեկտեմբերի։ Ներքին գործերի մինիստրը հաստատեց բժշկական խորհրդի որոշումը, որով կարելի է համարվում թոյլ տալ, որպէս զի Թօքախտ բժշկելու Կօխի միջոցը գործ դրվի Ռուսաստանում, ձեռք առնելով դրա հետ միասին միջոցներ՝ դեղծումների և սխալների առաջն առնելու համար։ Փորձերը պէտք է տեղի ունենան կառավարութեան վերահսկողութեամբ և բժշկի անձնական պատասխանատուութեամբ, բացառապէս կառավարչական և հասարակական բուժարաններում. պէտք է գործ դնել այն միջոցները, որոնց իսկութիւնը անկասկածելի է, ուստի և ցոյց կը տրվի մի լաբօրատօրիա, որի վրա պարտաւորութիւն կը դրվի արտադրել Կօխի հեղուկը։—Երկաթուղիների դեպարտամենտը պարտաւորեցրել է երկաթուղային ընկերութիւններին անընդհատ ուշադրութիւն դարձնել մամուլի կողմից մատնանիշ արած անճշտութիւնների, անկարգութիւնների և դեղծումների վրա, իւրաքանչիւր անգամ մանրամասն քննութեան առնելով՝ համապատասխան միջոցներ ձեռք առնելու կամ մեղաւորներին պատժելու համար, կամ թէ հերքում գրելու այն լրագրի մէջ, որը հաղորդել է անճիշդ տեղեկութիւններ։ Եթէ լրագրութեան մէջ լոյս կը տեսնի հարկաւոր հերքումը կամ բացատրութիւնը, դա կը համարվի ապացոյց, որ փաստերը ճիշդ են, և դրա հետևանքն այն կը լինի, որ մինիստրութիւնը խիստ կը վերաբերվի և պատժի միջոցներ ձեռք կառնի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 դեկտեմբերի: Տեխնիկական ընկերութեան մէջ կազմված յանձնաժողովը, որը պիտի մշակէ Սիբիրի երկաթուղու ծրագիրը, հաւանութիւն է տալիս այդ երկաթուղու կառավարչական կամ հիւսիսային ուղղութեանը: Սիբիրի ջրային հաղորդակցութիւններն էլ պիտի բարեկարգվեն միաժամանակ երկաթուղու կառուցման հետ:

ՊԱՐԻԶ, 3 դեկտեմբերի: «Ռուսաստանի բարեկամներ» ասված ընկերութիւնը փակվեց:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ.

Նոյեմբերի 30-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ. . .	85 ր.	80 կ.	
Բերլինի վրա 100 մարկ — . . .	42 »	75 »	
Փարիզի վրա 100 ֆրանկ — . . .	34 »	05 »	
Ոսկի — — արժէ . .	6 »	95 »	
Մաքսային կուպօններ — . . .	138 »	50 »	
Արծաթ — — — . . .	1	10 »	
Բորսային դիսկօնտներ — . . .	4 և	$4\frac{3}{4}\%$ »	
Պետ. բանկի 5% տոմս 1-ին շրջանի.	103 »	50 »	
— — — — 2-րդ —	103 »	37 »	
— — — — 3-րդ —	103 »	50 »	
— — — — 4-րդ —	103 »	50 »	
— — — — 5-րդ —	103 »	50 »	
— — — — 6-րդ —	— »	— »	
6% ոսկեայ ռէնտա	147 »	— »	
4% ոսկեայ փոխառութիւն	— »	— »	
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	104 »	25 »	
— — — — 2-րդ —	105 »	25 »	
— — — — 3-րդ —	107 »	25 »	
Ներքին 5% առաջին փոխառութ.	239 »	— »	
— — երկրորդ —	218 »	75 »	
Պետական. երկաթուղային ռէնտա .	104 »	— »	
$5\frac{1}{2}\%$ ռէնտա	105 »	50 »	
4% ներքին փոխառութիւն	91 »	50 »	
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	102 »	75 »	
$5\frac{1}{2}\%$ վկայակ. գիւղ. հող. բանկի.	105 »	50 »	
$4\frac{1}{2}\%$ գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	139 »	75 »	
— — — թղթադ.	101 »	75 »	
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիները. .	99 »	87 »	
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	97 »	62 »	
Օդեսայի — — .	99 »	50 »	
Թիֆլիսի — — .	— »	— »	
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	— »	— »	
— — Քութայիսի — — .	— »	— »	

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ЙАЙТАРАРՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորին վեհափառութեան հրամանով բոլոր հայոց օրիորդաց ուսումնարաններում, որպէս ձեռնարկ ընդունված „ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐ Ե ԾԱՂԿԱԳՐԵՐ ՁԵՌԱԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ“ անունով հրատարակութիւնս հարկաւոր քանակութեամբ ունենալու համար, խնդրեմ իւրաքանչիւր ուսումնարանի վարչութիւնից դիմել ինձ, հաշւելով իւրաքանչիւրը միայն աշակերտուհիների համար, փոխանակ 50 կոպէկի, առանց ճանապարհածախսի 40 կոպ., ճանապարհածախսով:

Շուտով տպագրվելու է կանվայի վրա կարելու համար 25-ի չափ ներկերով „Ոգի Հայաստանի“ պատի գորգի համար, որի գինն է 2 րուբլի, ճանապարհածախսով և „Հայկական դրօշմ“ բարձի երեսի համար, գինն է 50 կ. ճանապարհածախսով: Սրանք կարող են ինքն ըստ ինքեան ծառայել իբրև զարդ ամեն տան մէջ:

Որովհետև այս հրատարակութիւնների քանակութիւնը սահմանափակված է և միայն ինձ մօտ են ծախվելու, ուստի ցանկացողները թող բարեհաճեն անպատճառ վաղօրօք ինձ դիմել: Ծախս քիչ լինելու և իրանց յարմարութեան համար՝ փոքր տեղերից կարելի է միասին դիմել: Իմ հասցէս. С. Петербургъ, Невскій просп. Армянская церковь, Вардану Варданяну. 1—10

ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

ՆԻԿՈՂԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԱՎՎԱ ՄԱՐՕԶՕՎԻ ՈՐԴԻ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ունի պատիւ յայտնել ի տեղեկութիւն պ.պ. վաճառականների, որ մեր առևտրական պահեստը, որը գտնվում է Բագու քաղաքում, Ծովի եզրում, Կրասիլնիկեանցի տանը, 1891 Թուականի Յունվարի մէկից տեղափոխվելու է Կրասիլնիկեանցի տանից՝ Մարգարէ Իվանովիչ Երամիշեանցի տունը, որը գտնվում է հին Պօլիցեյի փողոցում, ուր և խնդրում ենք 1891 Թուականի Յունվարի մէկից որ մեր մանուֆակտուրային ապրանքը մեր պահեստից առնողները բարեհաճեն դիմել: 1—4 (ե)

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ ТОВАРИЩЕСТВО МЕХАНИЧЕСКАГО И ЧУГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовокъ, вальцовыхъ поставовъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверіо. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ грабель «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелѣзныхъ дорогъ.

Складъ локомобилей, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клйетонъ и Шутлівортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н|Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго училища кв. № 8.

33—100 (ե. շ.)

„ДОНСКАЯ ПЧЕЛА“

(годъ XVI).

Какъ и въ теченіи минувшихъ пятнадцати лѣтъ, будетъ выходить два раза въ недѣлю, по четвергамъ и воскресеньямъ.

Цѣль газеты—служеніе интересамъ Пріазовскаго края: разработка вопросовъ, касающихся экономической жизни этого края, своевременное обсужденіе всѣхъ явленій, имѣющихъ близкое соприкосновеніе съ мѣстной жизнью, оглашеніе болѣе или менѣе важныхъ событій, текущія явленія и мѣстныя новости.

Жизнь окружающихъ городовъ и другихъ сосѣднихъ мѣстностей въ «Донской Пчелѣ» имѣетъ всегда обширное мѣсто.

Торговый отдѣлъ «Донской Пчелы» доведенъ до самыхъ широкихъ размѣровъ; коммерческія свѣдѣнія, цѣны Ростовскаго, Таганрогскаго, Новороссійскаго и другихъ торговыхъ рынковъ. Этотъ отдѣлъ особенно важенъ для всего торговаго міра Кубанской, Донской, Терской областей, Екатеринославской, Воронежской и Ставропольской губерній, гдѣ «Донская Пчела» уже успѣла получить достаточную извѣстность, какъ необходимое подспорье для торговыхъ сдѣлокъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Въ Ростовѣ на-Дону.		Съ доставкой на домъ въ Ростовѣ и пересылкой иногороднимъ.	
на годъ	6 р. —	на годъ	7 р. —
» полгода	3 » 50	» полгода	4 » —
» 3 мѣсяца	2 » —	» 3 мѣсяца	2 » 50

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Письма и деньги адресуются исключительно въ контору редакціи «Донской Пчелы», въ Ростовѣ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ гг. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адргсы четко и разборчиво.

Премія. Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 25 Декабря сего 1890 года подписныя деньги за 1891 годъ, будетъ разосланъ безплатно «Донско-Азовскій» русско-армянскій календарь на 1891 годъ.

1—3 Редакторъ-Издатель **И. А. Теръ-Абраміанъ.**

ԲԺԻՇԿ ԱՂԱՄԱԼԵԱՆ տեղափոխվել է Գօլովինսկի Պրօսպեկտ, Բաղդոնեայս պոստի դիմաց, տուն Միրզոեվի № 44: Հիւանդները ընդունում է առաւօտեան ժամի 12-ից մինչև 1 և երեկոյեան ժամի 5—7: 3—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 4/16 ապրիլից սկսած

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պօլիս:

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի,	5/17 դեկտեմբերի	շոգենաւ	ՄԻՆԳՐԷԼԻԱ	նաւապետ	ԺԻԲՈՒԷՆ
—	19/31 —	—	ՍԻՐԿԱՍԻ	—	ԲՕՇԷԼ
—	2/14 յունվարի	—	ԱՆԱՏՕԼԻԱ	—	ԳԱՐՐԻԿ.
—	16/28 —	—	ՄԻՆԳՐԷԼԻԱ	—	ԺԻԲՈՒԷՆ

Տօմսակները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իջական գնից պակասցրվում է:

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, իւր տանը: ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, նախկին գեներալ Տէր-Աստուրօվի տանը: 3—10 (ե. և շ.)

Լոյս տեսաւ Թիֆլիսի „Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան“ տպագրութեամբ և վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում Յովհաննու Դարդէլի

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Գինը 1 ր. 25 կ.

—

Ընկերութեան վարչութիւնը վերստին յայտնում է սրանով, որ ներկայ տարվան անդամները կը ստանան

ա. Պաղասանեան-Հայոց պատմութիւն, գինը	1 ր. 50 կ.
բ. Կ. Մելիք-Շահնազարեան. Շերամապահութիւն	— „ 60 „
և գ. Դարդէլի Ժամանակագրութիւն	1 „ 25 „

2—2

ՇՈՒՇՈՒՄ

բացել եմ **ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ**

Ցանկացողները դիմում են ШУША, Андреасу Абраамянцу. 4—5 (շ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի:
ՌՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԽՍԱՀԱԿԵԱՆՑ—$11\frac{1}{2}$—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՄՈՒԽԱՐԻՆՍԿԱՅԱ—12—$12\frac{1}{2}$ ժ., կանանց և ներքին ց.
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—$12\frac{1}{2}$—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՈՄՍԿԻ—5—$6\frac{1}{2}$ ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոթերապիա):
ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Վճար—50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) համար առանձին:
Հերթական բժիշկ—երեկ. ժ. 9-ից մինչև առ. ժ. 7-ը:

Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Дозволено цензурою, Тифлисъ 3 Декабря 1890 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.